

Նուռնու գյուղ, Վարչական ղեկավար՝ Մնացական Գևորգյան

Մակերես՝ 5.88կմ²

Բնակչություն՝ 627

Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 գրադարան:
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ
հեռավորությունը մարզկենտրոնից 45 կմ
հեռավորությունը Աբովյանից՝ 14 կմ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղ Հրազդան գետի ձախ ափին, Բյուրեղավանից 4 կմ հյուսիս: Ստեղծվել է մեր թվ. 10-րդ դարում: Երկաթուղային կայարան է: Նուռնուսի հին գյուղատեղիում հայտնաբերվել է քարե դարի հնագույն կայան՝ աշեյան և մուստիեյան տիպի գործիքներով, պլեյստոցենի ժամանակաշրջանի բույսերի և կենդանիների մնացորդներով, գերեզմանատուն, ձիթհան կայան: Գյուղի անունն առաջացել է 7 համայնքների միավորումից: Հյուսիսային կողմում՝ այժմյան գյուղում, բնակվել են ադրբեջանցիներ և քիչ թվով հայ ընտանիքներ: Բնակիչները զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ: 19- րդ դարում մարզի Ալափարս բնակավայրից գյուղում բնակություն է հաստատել Սումբատ աղան, որի ջանքերի շնորհիվ 3 տարվա ընթացքում գյուղը մաքրվել է ադրբեջանցիներից: Այժմ գյուղի վարչական տարածքը կազմում է 1450 հա, կլիման բարեխառն է:

: